Այստեղ կարևորվում է բժշկի և միջին բուժանձնակազմի պաշտոնների նկարագրի ներդրումը: Կարելի է ԱԱՊ օղակում ստեղծել միջին բուժանձնակազմի բրիգադ, որի կազմում կլինեն տեղամասային, ֆիզիոթերապևտիկ կաբինետի բուժքույրերը և սոցիալական աշխատողը: Այն կարող է ապահովել բժշկի նշանակումների, վիրակապությունների, արյան զարկերակային ճնշման չափում, ինչպես նաև միջարք ֆիզիոթերապևտիկ միջամտությունների լիարժեք ծավալով կատարում:

**3.6 Երևանի քաղաքային տարանի ենթակայության ԱԱՊ օղակի բուժօգնությունները մեկնեցրելի կառավարման հմտությունները գնահատում**

Առաջնորդությունը սահմանվում է անհատական բնավորության գծերի, վարքագծի, այլ մարդկանց վրաներգործելու, շփման ձևերի, վարչական դիրքի միջոցով: Գոյություն ունեն առաջնորդության բազմաթիվ սահմանումներ, որոնք ներառում են ենթադրություններ, որ առաջնորդությունը ներառում է ազդեցության գործընթաց է, որում մեկ անհատը ազդում է այլ մարդկանց վրա՝ կառավարելու

գործողությունները, ինչես նաև կանոնակարգելու տվյալ կազմակերպություններում իրավահարաբերությունները [148]:

Ըստ հետազոտության տվյալների, հետազոտության մասնակցած մենեջերների 55,7%-ն ունեցել է հարմարվողականության ցածր մակարդակ (0-23 բալլ), 42,6%-ը՝ միջին (24-29 բալլ), իսկ 1,7%-ը՝ բարձր (30-36 բալլ) մակարդակ (գծ. 16):



**Գծապատկեր 16.** Երևանի քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի բոլոր ժեստատություններին տարբեր մակարդակի մենեջերների առաջնորդության հարմարվողականության ճիգնահատումը ստմակարդակների (%)

Մենեջերների առաջնորդության հիմնական ճերքը ներկայացված են աղյուսակ 21-ում: Անհրաժեշտ է նշել, որ 20% դեպքերում դեկավարները միաժամանակ ունեցել են մեկից ավելի առաջնորդության առաջնային ճ: Առավել տարածված են առաջնորդության 2-3 (47,2%) և 1-2 (29,6%) ճերքը:

**Աղյուսակ 21**

Երևանի քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի բոլոր ժեստատություններին տարբեր մակարդակի մենեջերների առաջնորդության տարբեր ճերքի հանդիպամ հաճախականությունը

Առաջնորդության ճ	n	P±m
Ոճ 1-2	42	29,6±3,8**
Ոճ 1-3	16	11,3±2,7**
Ոճ 1-4	4	2,8±1,4
Ոճ 2-3	67	47,2±4,2**
Ոճ 2-4	3	4,2±1,7*

Ոճ 3-4	7	4,9±1,8*
*P<0,05 **P<0,001		

Ոճ 1-2 պրոֆիլի առաջնորդները (29,6%) կարող են բարձրացնել և իջեցնել իրենց փոխհարաբերություններին վարքագիծը, բայց առանց վարչարարության իրենց հարմարավետ չեն գտնում: Ըստ P. Hersey-ի, դրանք այն մենեջերներն են, ովքեր դառնում են այլ բժիշկների վերահսկող, բայց հակված չեն թողնելու բուն բժշկությունը: Այս պրոֆիլի մենեջերները հակված են արդյունավետ լինել նույնիսկ պատրաստակամության ցածրից միջին մակարդակների պայմաններում:

Ոճ 2-3 պրոֆիլի առաջնորդները (47,2%) հակված են հաջողություններ աշխատելու պատրաստակամության միջին մակարդակ ունեցող անձանց հետ, սակայն դժվարանում են իրականացնել գործառնություններ կարգապահական խնդիրներ ունեցող և անպատրաստ աշխատանքային խմբերի հետ: Այս ոճը առավել հաճախ հանդիպողն է ԱՄՆ-ում և կրթական բարձր մակարդակ ունեցող զարգացած երկրներում: Այս ոճի առաջնորդները պետք է սովորեն նաև կիրառել Ո1 և Ո4 ոճերը: Օգտագործել Ո1 ոճը՝ կկարողանան ցածր պատրաստակամության տեր մարդկանց մակարդակը բարձրացնել և իրականացնել կարգապահական բնույթի միջամտություններ: Մենեջերները կկարողանան օգտագործել Ո4 ոճը, եթե առաջնորդը ցանկանում է հասնել մարդկանց լիարժեք ինքնադրսևորման և նրանց պոտենցիալի լիակատար բացահայտման:

Պետք է նշել, որ առաջնորդության չորս հիմնական ոճերի միաժամանակ տիրապետել են հետազոտության մեջ ընդգրկվածների 9,6%-ը (n=11): Սակայն իրավիճակի ճիշտ ախտորոշման և ոճի

փոփոխման համար մենեջերը միաժամանակ պետք է ունենան նաև հարմարվողականության բարձր մակարդակ: Այս ցուցանիշն արձանագրվել է միայն 1,7% դեպքերում:

Այսպիսով, Երևանի քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի բուժհաստատության ունենեցրի մենեջերների կառավարման հմտության ունենեցրի ուսումնասիրմանն ուղղված հետազոտության արդյունքները հիմք են հանդիսացել ենթադրել, որ շարունակական մասնագիտական զարգացման ծրագրերում պետք է մեծ տեղ հատկացվի առաջնորդության դասընթացների կազմակերպմանը: Այն կխթանի բժիշկների և բժիշկ-մենեջերների ճիշտ կառավարման, կազմակերպչական հմտության ունենեցրի ձևավորմանը:

**3.7. Երևանի քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի բուժհաստատության ունենեցրում բուժօգնության որակի բարելավման համալիր միջոցառումների արդյունավետության փորձարարական գնահատում**

Առաջարկվող փորձարարական գնահատման մեթոդաբանության ունենալն անցել է նախնական փորձաքննության թիվ 5 պոլիկլինիկայի բազայի վրա:

Թերապևտիկ պրոֆիլի պացիենտների հետազոտության կազմակերպումը մինչև 3 օր ԱԱՊ օղակում 51,7%-ից դարձել է 67,3% ( $P < 0,05$ ): Ցուցանիշը բարձր է եղել սրտի քրոնիկ ռևմատիկ հիվանդության, արյան ճնշման բարձրացմամբ բնութագրվող հիվանդության, սրտի իշեմիկ հիվանդության, թոքաբորբի, բրոնխիալ ասթմայի դեպքում (աղ. 22):



**Աղյուսակ 22**

Տեղամասային թերապևտիկ ողմից ժամանակին հետազոտվելու ցուցանիշի բարելավման միտումները էքսպերիմենտի պայմաններում (%)

Հիմնական հիվանդությունները ստՅՄԴ 10-ի	n	Մինչև 3 օր հետազոտվածներ			
		Առկա պայմաններ		Առաջարկվող բարեփոխումներից հետո	
		n	P±m	n	P±m
Սրտի քրոնիկ ռևմատիկ հիվանդություն (I05-I08)	35	18	52,3±8,4*	24	67,5±7,9*
Հիվանդություններ բնութագրված արյան ճնշման բարձրացմամբ (I10-I15)	39	21	52,8±8,0*	27	69,3±7,4*
Սրտի իշեմիկ հիվանդություն (I20-I25)	55	28	51,0±6,7*	36	64,8±6,4*
Գրիպաթոքաբորբ (J10-J18)	56	30	53,0±6,7*	40	71,2±6,1*
Ստորին շնչակն ուղիներին քրոնիկ հիվանդություններ (J20-J22, J40-J47) (բրոնխիտներ)	45	22	49,8±7,5*	27	61,0±7,3*
Բրոնխիալ ասթմա (J45)	25	13	50,3±10,0*	16	63,7±9,6*
Ստամոքսի և 12-մատնյա աղու խոց (K25, K26)	49	24	48,6±7,1*	29	59,1±7,0*
Ստամոքսի և 12-մատնյա աղիքի բորբոքում (K29) (գաստրիտ, դուոդենիտ)	43	23	53,3±7,6*	31	72,2±6,8*
Լեղապարկաբորբ (K81) (խոլեցիստիտ)	30	16	52,4±9,1*	21	70,9±8,3*
Երիկամների խոզոկամիջանկյալային հիվանդություններ (N10-N16) (նեֆրիտներ)	35	19	54,0±8,4*	26	73,2±7,5*
*P<0,001					

Մինչև 7 օր տևողությամբ հիվանդներին հետազոտությունը կրճատվել է 1,5 անգամ և 42,7%-ից դարձել է 29,5%: Պացիենտների հետազոտության ամբողջականությունն աճել է և 65,4±4,3%-ից դարձել 81,3±6,2% (t=2.1 P<0,05), ցուցանիշը բարելավման միտում ունեցել արյան ճնշման բարձրացմամբ բնութագրված հիվանդությունների, սրտի իշեմիկ հիվանդության, բրոնխիալ ասթմի, ստամոքսի և 12-մատնյա աղու խոցային հիվանդության ժամանակ: Ոչ

լրիվ հետազոտվածների տեսակարար կշիռը նվազել է 2անգամ (34,6%-ից դարձել է 18,7%) (աղ. 23):

Բարելավվել է պոլիկլինիկա-ստացիոնար պացիենտների հետազոտման և բուժման անընդհատությունը (ցուցանիշը 43,1%-ից դարձել է 78,7%):

Բուժօգնության որակի կարևոր ցուցանիշ է ժամանակի և ճիշտ ախտորոշումը: Ըստ հետազոտության տվյալների ախտորոշումների անհամապատասխանությունը փորձագետների և բժիշկների միջև նվազել է և 10,2%-ից նվազել է 5,3%:

Բուժօգնության ցուցաբերման բացթողումներն ու թերությունները նոր կազմակերպչական մոտեցումների պայմաններում նվազել են: Բուժման կազմակերպման դեֆեկտները  $25,3 \pm 2,9\%$ -ից դարձել են  $15,8 \pm 2,4\%$  ( $t=2.4$   $P<0,05$ ): Ցուցանիշը լավացման միտում է ունեցել հատկապես արյան ճնշման բարձրացմամբ ընթացող հիվանդությունների, բրոնխիտի, բրոնխիալ ասթմայի դեպքում:

### Աղյուսակ 23

ԱԱՊ օղակի տեղամասային թերապևտիկ ողմից պացիենտների հետազոտման ընդգրկվածությունը նոր կազմակերպչական մոտեցումների պայմաններում (%)

Հիմնական հիվանդությունները ստ. ՅՄԴ 10-ի	n	Հետազոտության ընդգրկվածություն			
		Առկա պայմաններ		Առաջարկվող բարեփոխումներից հետո	
		n	P±m	n	P±m
Սրտի քրոնիկ ռևմատիկ հիվանդություն (I05-I08)	35	20	56,8±8,4	24	68,9±7,8
Հիվանդություններ բնութագրված արյան ճնշման բարձրացմամբ (I10-I15)	39	25	64,9±7,6	31	79,2±6,5
Սրտի իշեմիկ հիվանդություն (I20-I25)	55	39	71,3±6,1	48	86,4±4,6
Գրիպաթոքաբորբ (J10-J18)	56	36	64±6,4	44	78,6±5,5
Ստորին շնչակաթն ուղիների քրոնիկ հիվանդություններ (J20-J22,	45	32	70,9±6,8	40	89,7±4,5

J40-J47) (բրոնխիտներ)					
Բրոնխիալ ասթմա (J45)	2 5	17	69,7±9,2	22	87,8±6,5
Ստամոքսի և 12-մատնյա աղու խոց (K25, K26)	4 9	32	64,8±6,8	41	84,5±5,2
Ստամոքսի և 12-մատնյա աղիքի բորբոքում (K29) (գաստրիտ, դուոդենիտ)	4 3	27	62,6±7,4	33	77,9±6,3
Լեղապարկաբորբ (K81) (խլեցիտիտ)	3 0	17	55,5±9,1	21	69,8±8,4
Երիկամների խոզովակամիջանկյալային հիվանդություններ (N10-N16) (նեֆրիտներ)	3 5	26	73,3±7,5	32	90,5±5,0

Բուժման ժամանակին նշանակման ցուցանիշը աճել և 83,0±3,6%-ից դարձել է 94,1±4,5% ( P<0,001): Ցուցանիշի բարելավումը հիմնական նոզոլոգիաների ժամանակ ունեցել է տարբեր միտումներ: Այսպես արյան ճնշման բարձրացմամբ բնութագրված հիվանդությունների ժամանակ ցուցանիշի փոփոխությունը կազմել է 85,9-96,7%, սրտի իշեմիկ հիվանդության դեպքում՝ 80,7-94,5%, գրիպի և թոքաբորբի դեպքում՝ 89,7-98,2% և բրոնխիտի դեպքում՝ 85,4-95,0% (աղ . 24):

Բուժման միջին տևողության հիմնավորման ցուցանիշը բարելավվել է և 72,5%-ից դարձել է 84,3%, իսկ ոչ բավարարը՝ 18,3%-ից դարձել է 11,1% (աղ . 25):

**Աղյուսակ 24**

ԱԱՊ օղակու մտեղամասային թերապևտի մոտպացի ենտների բուժման որակի գնահատման համամետական ըստառկան նորկազմակերպչական մոտեցումների ներդրման պայմաններում

Հիմնական հիվանդությունները ստՅՄԴ 10-ի	Առկա հրավիճակ					Նոր կազմակերպչական մոտեցումների ներդրման պայմաններում				
	բուժումը նշանակված է		բուժման որակ			բուժումը նշանակված է		բուժման որակ		
	Ժամանակին	ոչ Ժամանակին	ամբողջական	ոչ ամբողջական	չհիմնավորված հետազոտություններ	Ժամանակին	ոչ Ժամանակին	ամբողջական	ոչ ամբողջական	չհիմնավորված հետազոտություններ
Սրտի քրոնիկ ռեմատիկ հիվանդություն (I05-I08)	82,2	17,8	74,9	22,0	3,1	91,3	8,7	82,4	15,8	1,8
Հիվանդություններ բնութագրված արյան ճնշման բարձրացմամբ (I10-I15)	85,9	14,1	66,9	29,1	4,0	96,7	3,3	77	20,9	2,1
Սրտի իշեմիկ հիվանդություն (I20-I25)	80,7	19,3	78,0	18,8	3,2	94,5	5,5	86,5	11,6	1,9
Գրիպս թոքաբորբ (J10-J18)	89,7	10,3	82,5	13,8	3,7	98,2	1,8	91,3	7,1	1,6
Ստորին շնչականալի ներքին քրոնիկ հիվանդություններ (J20-J22, J40-J47) (բրոնխիտներ)	85,4	14,6	83,1	12,0	4,9	95,0	5	92,1	5,4	2,5
Բրոնխիալ ասթմա (J45)	83,0	17	73,8	22,8	3,4	93,8	6,2	80,6	18,0	1,4
Ստամոքսի և 12-մատնյա աղու խոց (K25, K26)	76,9	23,1	73,7	20,1	6,2	89,7	10,3	82,0	14,8	3,2
Ստամոքսի և 12-մատնյա աղիքի բորբոքում (K29)	77,6	22,4	76,8	16,8	6,4	92,4	7,6	83,3	13,3	3,4

(գաստրիտ, դուոդենիտ)										
Լեղապարկաբորբ (K81) (խոլեցիստիտ)	85,8	14,2	78,9	15,2	5,9	96,1	3,9	90,2	7,8	2,0
Երիկամների խոզոժակամիջանկյալային հիվանդություններ (N10-N16) (լեֆրիտներ)	82,7	17,3	75,6	20,3	6,1	92,9	7,1	86,4	11,9	1,7
P±m	83,0±3,6	17,0±2,1	76,4±4,5	19,1±2,2	4,5±0,9	94,1±4,5*	5,9±2,4**	85,2±6,2*	12,6±2,7*	2,2±0,4*
*P<0,001 **P<0,05										

**Աղյուսակ 25**

ԱԱՊ օղակու մտեղամասային թերապևտիկ ողմից հիվանդների բուժման միջին տևողություն հիմնավորումը ըստ առկա և նոր կազմակերպչական մոտեցումների ներդրման պայմաններում

Հիմնական հիվանդություններ ըստ ՀՄԴ 10-ի	Բուժման միջին տևողություն հիմնավորում					
	Առկա հիվանդություններ			Նոր կազմակերպչական մոտեցումների ներդրման պայմաններում		
	բավարար	նշ բավարար	ձգձգված	բավարար	նշ բավարար	ձգձգված
Սրտի քրոնիկ ռեմատիկ հիվանդություն (I05-I08)	68,0	17,8	14,2	78,4	12,3	9,3
Հիվանդություններ բնականաբար ծննդամասնաբաժնային (I10-I15)	72,7	20,9	6,4	93,6	4,2	2,2
Սրտի իշեմիկ հիվանդություն (I20-I25)	73,2	14,9	11,9	90,5	5,1	4,4
Գրիպի թոքաբորբ (J10-J18)	81,4	10,4	8,2	92,0	4,6	3,4
Ստորին շնչակույրի ռիտիքային հիվանդություններ (J20-J22, J40-J47) (բրոնխիտներ)	78,9	12,1	9,0	87,1	10,5	2,4
Բրոնխիալ ասթմա (J45)	67,8	22,6	9,6	73,7	19,3	7,0
Ստամոքսի և 12-մատնյա աղու խոց (K25, K26)	72,8	25,2	2,0	79,2	16,7	4,1
Ստամոքսի և 12-մատնյա աղիքի բորբոքում (K29) (գաստրիտ, դուոդենիտ)	73,0	13,8	13,2	85,3	11,4	3,3

91

Լ Ե ղ ապարկ աբորբ (K81) (խոլ Ե ցիստիտ)	71,2	19,3	9,5	83,1	13,1	3,8
Երիկամների խոլոկոլակամիջանկյալային հիվանդություններ (N10-N16) (ուեֆրիտներ)	65,6	25,7	8,7	80,5	14,2	5,3
P±m	72,5±4,6	18,3±3,1	4,2±2,4	84,3±6,8*	11,1±1,8*	4,6±0,7*
*P<0,001						

ԱԱՊօղակի գործունեության գնահատման հիմնական ցուցանիշների փոփոխությունը նոր կազմակերպչական մոտեցումների ներդրման պայմաններում

Բուժախտորոշիչ գործընթացի փոփոխություն	Առկա պայմաններում	Նոր կազմակերպչական մոտեցումների ներդրման պայմաններում
<b>1. Զե տազո տո լ թ յ ո լ ն</b> ա. ժամանակին բ. ոչ ժամանակին	51,7	67,3
	48,3	32,7
	$\chi^2=77,3, P=0,001$	
ա. ամբողջական բ. թերի	65,4	81,3
	34,6	18,7
	$\chi^2=77,3, P=0,001$	
<b>2. Ախտորոշման համընկնելիություն</b>	90,2	95,3
	$\chi^2=4,7, P=0,03$	
<b>3. Բուժում</b> ա. ժամանակին բ. ուշացած	83,0	94,1
	17,0	5,9
	$\chi^2=17,2, P=0,001$	
ա. ամբողջական բ. թերի	76,4	85,2
	23,6	14,8
	$\chi^2=5,9, P=0,01$	
<b>4. Պլանային հոսպիտալիզացիայի ժամանակ ԱԱՊօղակից հե տազո տո լ թ յ ո լ ն ն եր ի բացակայություն</b>	43,6	21,4
	$\chi^2=4,4, P=0,001$	
<b>5. Բուժման տևողություն</b> ա. բավարար բ. ոչ բավարար գ. ձգձգված	72,5	84,3
	18,3	11,1
	9,2	5,9
	$\chi^2=18,7, P=0,001$	

Տեղամասային թերապևտի և ընտանեկան բժշկի աշխատանքի որակի կարևորագույն ցուցանիշներից է ախտորոշման որակը: Այսպես, նոր կազմակերպչական մոտեցումների ներդրման պայմաններում ախտորոշման թերությունները կրճատվել և 23,6%-ից դարձել է 14,8%, իսկ ոչ ամբողջական բուժման ցուցանիշը՝ 76,4%-ից դարձել է 85,2% (աղ. 26):

Դիսպանսեր հսկողություն արդյունավետությունը բարձրացել և 55,6±4,2%-ից դարձել է 73,3±4,7% (աղ. 27): Կազմակերպչական նոր մոտեցումների ներդրման պայմաններում բարելավվել են քրոնիկ հիվանդների դիսպանսեր հսկողություն արդյունավետությունը գնահատող

ց ու ց ա ն ի շ ն ե ր ը (աղ . 28): Դ ի ս պ ա ն ս ե ր հ ս կ ո ղ ու թ յ ա ն վ ե ր ց վ ա ծ պ ա ց ի ե ն տ ն ե ր ի ժ ա մ ա ն ա կ ի ն հ ե տ ա զ ո տ մ ա ն ց ու ց ա ն ի շ ը 55,6±4,3%-ի ց դ ար ձ ե լ է 67,3±4,1% (P=0,05): Յ ա տ կ ա պ ե ս ց ու ց ա ն ի շ ը ք ա ր ե լ ա վ վ ե լ է ս ր տ ի ի շ ե մ ի կ հ ի վ ա ն դ ու թ յ ա ն (49,2%-70,3%), ս ր տ ի ք ր ո ն ի կ ռ ն մ ա տ ի կ հ ի վ ա ն դ ու թ յ ա ն (50,7%-70,4%) և ս տ ա մ ո ք ս ի և 12-մ ա տ ն յ ա ա ղ ու խ ո ց ի (59,3%-70,2%) ժ ա մ ա ն ա կ :

**Աղյուսակ 27**

Ա Ա Պ օ ղ ա կ ու մ տ ե ղ ա մ ա ս ա յ ի ն թ ե ր ա պ և տ ի կ ո ղ մ ի ց ք ր ո ն ի կ հ ի վ ա ն դ ն ե ր ի դ ի ս պ ա ն ս ե ր հ ս կ ո ղ ու թ յ ա ն ո ր ա կ ի գ ն ա հ ա տ ու մ ը

Հ ի մ ն ա կ ա ն հ ի վ ա ն դ ու թ յ ու ն ն ե ր (ը ս տ Յ Մ Դ 10-ի )	n	Յ ե տ ա զ ո տ ու թ յ ու ն			
		Ա ռ կ ա պ ա յ մ ա ն ն ե ր ու մ		Ն ո ր կ ա զ մ ա կ ե ր պ չ ա կ ա ն մ ո տ ե ց ու մ ն ե ր ի ն ե ր դ ր մ ա ն պ ա յ մ ա ն ն ե ր ու մ	
		n	P±m	n	P±m
Ս ր տ ի ք ր ո ն ի կ ռ ն մ ա տ ի կ հ ի վ ա ն դ ու թ յ ու ն (I05-I08)	35	19	54,9±8,4	28	78,7±6,9
Հ ի վ ա ն դ ու թ յ ու ն ն ե ր ք ն ու թ ա զ ր վ ա ծ ար յ ա ն ճ ն շ մ ա ն ք ա ր ձ ր ա ց մ ա մ ք (I10-I15)	39	22	56,6±7,9	27	69,9±7,3
Ս ր տ ի ի շ ե մ ի կ հ ի վ ա ն դ ու թ յ ու ն (I20-I25)	55	33	60,8±6,6	40	72,8±6,0
Գ ր ի պ և թ ո ք ա ք ո ր ք (J10-J18)	56	33	58,4±6,6	38	68,6±6,2
Ս տ ո ր ի ն շ ն չ ա կ ա ն ու ղ ի ն ե ր ի ք ր ո ն ի կ հ ի վ ա ն դ ու թ յ ու ն ն ե ր (J20-J22, J40-J47) (ք ր ո ն խ ի տ ն ե ր )	45	29	65,3±7,1	33	73,9±6,5
Բ ր ո ն խ ի ա լ ա ս թ մ ա (J45)	25	13	50,5±10,0	20	78,4±8,2
Ս տ ա մ ո ք ս ի և 12-մ ա տ ն յ ա ա ղ ու խ ո ց (K25, K26)	49	26	53,2±7,1	34	68,7±6,6
Ս տ ա մ ո ք ս ի և 12-մ ա տ ն յ ա ա ղ ի ք ի ք ո ր ք ո ք ու մ (K29) (գ ա ս տ ր ի տ, դ ու ո ղ ե ն ի տ)	43	24	56,1±7,6	33	75,9±6,5
Լ ե ղ ա պ ար կ ա ք ո ր ք (K81) (խ ո լ ե ց ի ս տ ի տ)	30	17	55,7±9,1	23	76,8±7,7
Ե ր ի կ ա մ ն ե ր ի խ ո ղ ո վ ա կ ա մ ի ջ ա ն կ յ ա լ ա յ ի ն հ ի վ ա ն դ ու թ յ ու ն ն ե ր (N10-N16) (և ե Ֆ ր ի տ ն ե ր )	35	16	46±8,4	24	68,9±7,8
P±m	-	-	55,6±4,2	-	73,3±4,7*

\*P<0,001

Յ ե տ ա զ ո տ ու թ յ ու ն ն ե ր ի ա մ ք ո ղ ջ ա կ ա ն ու թ յ ու ն ը ք ն ու թ ա զ ր ո ղ ց ու ց ա ն ի շ ը հ ի մ ն ա կ ա ն ն ո զ ո լ ո գ ի ա ն ե ր ի ժ ա մ ա ն ա կ ք ա ր ե լ ա վ վ ե լ և 65,1±5,0%-ի ց



դարձել է 86,4±7,0% (P< 0,05): Յուրաքանչյուր քարտեղավորում հատկապես գրանցվել է ստամոքսի և 12-մատնյա աղու խոցի (59,4%-90,2%), և դապարկաբորբի դեպքում՝ 57,2%-91,4%:

Այսպիսով, հետազոտության տվյալները հիմնավորում են, որ անհրաժեշտ է մշակել համալիր կազմակերպչական մոտեցումներ, որոնք կապահովեն ԱԱՊ օղակի բուժօգնության որակի և մատչելիության քարտեղավորում:

ԱԱՊ օղակում տեղամասային թերապևտի մոտքրոնիկ հիվանդների դիսպանսեր հսկողության որակի համեմատական գնահատում

Հիմնական հիվանդություններ ըստ ԿԻՊ 10-ի	Առկա հրավիճակ						Նոր կազմակերպչական մոտեցումների ներդրման պայմաններում					
	Հետազոտության ժամկետներ		Հետազոտության ծավալ		Բուժառողջացուցիչ միջոցների ծավալի կատարում		Հետազոտության ժամկետներ		Հետազոտության ծավալ		Բուժառողջացուցիչ միջոցների ծավալի կատարում	
	Ժամանակին	նշանակին	լրիվ	նշանակին	լրիվ	նշանակին	Ժամանակին	նշանակին	լրիվ	նշանակին	լրիվ	նշանակին
Սրտի քրոնիկ ռևմատիկ հիվանդություն (I05-I08)	50.7	49.3	60.4	39.6	65.4	34.6	70.4	29.6	83.4	16.6	82.4	17.6
Հիվանդություններ բնութագրված արյան ճնշման բարձրացմամբ (I10-I15)	53.4	46.6	70.2	29.8	60.3	39.7	69.3	30.7	85.2	14.8	80.5	19.5
Սրտի իշեմիկ հիվանդություն (I20-I25)	49.2	50.8	70.1	29.9	67.5	32.5	70.3	29.7	80.4	19.6	84.3	15.7
Գրիպի թոքաբորբ (J10-J18)	53.7	46.3	63.7	36.3	70.1	29.9	63.5	36.5	84.4	15.6	87.2	12.8
Ստորին շնչականալի ներքին քրոնիկ հիվանդություններ (J20-J22, J40-J47) (բրոնխիտներ)	55.4	44.6	65.2	34.8	60.5	39.5	58.2	41.8	87.1	12.9	89.2	10.8
Բրոնխիալ ասթմա (J45)	52.7	47.3	60.8	39.2	59.4	40.6	60.1	39.9	88.1	11.9	90.1	9.9
Ստամոքսի և 12-մատնյա աղու խոց (K25, K26)	59.3	40.7	75.2	24.8	58.2	41.8	70.2	29.8	84.3	15.7	87.1	12.9
Ստամոքսի և 12-մատնյա աղիքի բորբոքում (K29) (գաստրիտ,	60.3	39.7	59.4	40.6	55.2	44.8	73.4	26.6	90.2	9.8	92.2	7.8

դ ու լ ո ղ ե ն ի տ)												
Լ ե ղ ա պ ա ր կ ա բ ո ր բ (K81) (խ ո լ ե ց ի ս տ ի տ)	63.1	36.9	57.2	42.8	65.3	34.7	72.2	27.8	91.4	8.6	89.4	10.6
Ե ր ի կ ա մ ն ե ր ի խ ո ղ ո վ ա կ ա մ ի ջ ա ն կ յ ա լ ա յ ի ն հ ի վ ա ն դ ո լ թ յ ո լ ն ն ե ր (N10-N16) (Լ ե Ֆ Ր ի տ ն ե ր )	58.2	41.8	69.1	30.9	63.4	36.6	65.1	34.9	89.4	10.6	90.4	9.6
P±m	55.6±4.3*	44.4±3.6*	65.1±5.0*	34.9±3.8*	62.5±4.3*	37.5±3.9*	67.3±4.1*	32.7±3.8*	86.4±7.0*	13.6±3.5**	87.3±2.5*	12.7±2.4*
*P<0.05, ** P>0.05												

**3.8. Երևանի քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ  
օղակի բոլոր ժեսուտատու թյուններին կառավարման  
նիսկերի գնահատում և մոդելավորումը SWOT  
վերլուծության մեթոդի**

Ցանկացած համակարգի գործունեության արդյունավետությունը կախված է նիսկերի ճիշտ գնահատման և կառավարման հետ: Այն կարող է իր հերթին բերել տարբեր ֆինանսական կորուստներ: Կառավարման ինտեգրացված համակարգը հնարավորություն է տալիս իրականացնել նիսկերի օպտիմալ գնահատում և կառավարում: Այն օգնում է նվազագույնի հասցնել նյութական և կազմակերպչական ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման աստիճանը:

Յետագործության այս փուլում մեր կողմից մշակվել է մենեջմենթի նիսկի ինտեգրացված համակարգի կազմակերպչական-ֆունկցիոնալ մոդել:

Մոդելի կառուցման առաջին փուլում պոտենցիալ նիսկի հայտնաբերման համար մեր կողմից կիրառվել է սոցիոլոգիական հարցման մեթոդը: Այն հնարավորություն է տվել գնահատել Երևանի քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի բոլոր ժեսուտատու թյուններին հիմնական ներքին նիսկերը: Արտաքին նիսկերի գնահատման համար կիրառվել է PEST (համակարգի արտաքին միջավայրի գործունեության վերլուծություն՝ քաղաքականություն (Political), տնտեսագիտություն (Economic), սոցիալական ոլորտ (Social), տեխնոլոգիա (Technological)) վերլուծություն: ԱԱՊ օղակի բոլոր ժեսուտատու թյուններին ուղեղնաթուղլ կողմերի գնահատման համար իրականացվել է կազմակերպության ներքին միջավայրի վերլուծություն (աղ. 29): SWOT վերլուծությունը իրականացրել են Երևանի քաղաքապետարանի առողջապահության վարչության

կողմից երաշխավորված ԱԱՊ օղակի գլխավոր բժիշկները: Ընդգրկման համար չափանիշ է հանդիսացել աշխատանքային ստաժը, մասնագիտական որակավորումը, մասնագիտական կատարելագործումը, ինչպես նաև համակարգում մեծ հեղինակություն վայելելու փաստը:

Մեր կողմից կիրառվել է ԱԱՊ օղակի որակական ռազմավարական վերլուծության մատրիցա՝ SWOT-վերլուծություն: ԱԱՊ օղակի SWOT վերլուծության բոլոր գործոնների դիտարկման արդյունքում ընդունվել է որոշում, որը կարևոր է ԱԱՊ օղակի նպատակի և ռազմավարության հստակեցման համար:

**Աղյուսակ 29**

Երևանի քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի բուժօգնությունների SWOT վերլուծության բաղադրիչների մոդելավորում

<p>ԱԱՊ օղակի ներքին միջավայր</p>	<p>Հավանական ուժեղ կողմեր (S).</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ որակավորված մասնագետներ,</li> <li>✓ ժամանակակից սարքավորումներ,</li> <li>✓ երաշխավորված պացիենտներ,</li> <li>✓ որակի հսկողության բազմաստիճանային համակարգ,</li> <li>✓ բժշկական ծառայությունների ցուցաբերման համար անհրաժեշտ պայմաններ,</li> <li>✓ պետական աջակցություն,</li> <li>✓ բարենպաստի միջի ձևավորում,</li> <li>✓ հարմար տեղակայում</li> </ul>	<p>Առկա թուլյալ կողմեր (W).</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ թուլյալ մարքեթինգային քաղաքականություն,</li> <li>✓ պետական \$ի նախնական միջոցների դեֆիցիտ,</li> <li>✓ անբարենպաստ հագեցվածություն,</li> <li>✓ բուժօգնության մատչելիության ցածր մակարդակ:</li> </ul>
----------------------------------	---	--

Արտաքին միջավայր	<p style="text-align: center;">Ակնկալվող</p> <p>հնարավորություններ (0).</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Ընդլայնել ծառայությունների շուկայի ծավալները,</li> <li>✓ պետական քաղաքականություն ուղղված առողջապահություն պետական սեկտորի ներդրումների աճի, բժշկական ծառայությունների որակի, մատչելիության նկատմամբ պացիենտների պահանջարկի ավելացում,</li> <li>✓ առողջապահության պետական քաղաքականություն և պացիենտների պահանջմունքի ավելացում,</li> <li>✓ նոր բժշկական ծառայությունների տեսնունդի աճի շուկայի մատչելիություն,</li> <li>✓ բժշկական ծառայությունների ցուցաբերման հարցում հարկային արտոնությունների սահմանում,</li> <li>✓ բնակչության հարաբերական ծերացում:</li> </ul>	<p style="text-align: center;">Սպասվող վտանգներ (Պ).</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Աշխատունակ տարիքի բնակչության թվաքանակի նվազում,</li> <li>✓ մրցակցային դաշտի ուժեղացում (մասնավոր սեկտորում մրցակիցների ավելացում),</li> <li>✓ բժշկական մասնագիտություն ցածր վարկանիշ,</li> <li>✓ քաղաքական կայունություն, պետական ֆինանսավորման անհամապատասխանությունների աշխարհում բժշկական ծառայությունների ծավալի ներքին համար, թերություններ իրավական դաշտում:</li> </ul>
------------------	--	--

ԱԱՊ օղակի SWOT վերլուծության արդյունքները հիմնավորել են, որ անհրաժեշտ է տարանջատել համակարգի ֆինանսավորման աղբյուրները, օրինակ՝ վճարովի ծառայության ծավալների ավելացում, հավաքագրված բնակչության համար հանդիսանում է ուժեղ կողմ, իսկ ապահովագրական փաթեթի գործունը՝ թուլյալ կողմ (աղ. 29):

Վերլուծության ընթացքում ԱԱՊ օղակի կառավարման ռիսկերի հայտնաբերումից հետո փորձագետների կողմից տրվել է այդ ռիսկերի քանակական գնահատական: Յուրաքանչյուր ռիսկի կառավարման ռազմավարության մշակման համար կատարվել է ըստ ազդեցության աստիճանի (բարձր, միջին, ցածր ազդեցության) այդ ռիսկի մակարդակի

առաջնակի գնահատում: Ռիսկի կարգավիճակի մատրիցային վերլուծության արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ ԱԱՊ օղակի կառավարման վրա առավել ազդեցություն են ունենում քաղաքական և տնտեսական ռիսկերը: Ռիսկի քանակական վերլուծության համար մեր կողմից մշակվել է ռիսկի գնահատման երկու չափանիշ՝ հետևանք և հավանականություն (աղ.30):

**Աղյուսակ 30**

Երևանի քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի բուժիաստատությունների հավանական ռիսկերի և դրանց հետևանքների քանակական գնահատականը

Ռիսկ	Ռիսկի հետևանք	Ռիսկի նյութականացման հավանականություն
<b>Ներքին ռիսկեր</b>		
1. Ռիսկ կապված բժշկական սարքավորումներով հագեցվածության հետ	Համակարգի վրա ազդեցության շտաբարձր մակարդակ	25-50%
2. Ռիսկ կապված համակարգի հիգիենիկ-հակահամաճարակային իրավիճակի հետ	Հիմնական գործունեության վրա բարձր ազդեցության աստիճան	(մինչև 25%
3. Ռիսկ կապված բժիշկների որակավորման մակարդակի հետ	Հիմնական գործունեության վրա բարձր ազդեցության աստիճան	25-50%
4. Ռիսկ կապված բժշկի աշխատանքային գրաֆիկի հետ	Համակարգի վրա ազդեցության բարձր մակարդակ	25-50%
5. Բուժաշխատողների առողջական վիճակի վրա բարձր ազդեցություն ունեցող ռիսկեր	Հիմնական գործունեության վրա բարձր ազդեցություն	25-50%
6. Մասնագիտական գործունեության ռիսկեր	Հիմնական գործունեության վրա սահմանափակ ազդեցություն	25-50%
7. Բժշկական ռիսկեր կապված քաղաքացիական-իրավական պատասխանատվության հետ	Հիմնական գործունեության վրա բարձր ազդեցության աստիճան	25-50%
8. Ռիսկ կապված բուժսարքավորումների, դեղորայքի, բժշկական պարագաների	Հիմնական գործունեության վրա բարձր ազդեցության աստիճան	25-50%

օգտագործման արդյունավետության հետ		
---	--	--

Ըստ հետազոտության տվյալների պարզվել է, որ ԱԱՊ օղակի հիմնական գործունեության վրա ազդող ռիսկերից 7-ն ունեն ազդեցության բարձր (25-50%), իսկ 1-ը՝ ազդեցության ցածր (մինչև 25%) աստիճան: Ըստ ռիսկերի նյութականացման հավանականության գնահատման մինչև 25% ընդգրկվել է 1 ռիսկ, իսկ 25-50%-ի սահմաններում մնացել են մնացած ռիսկերը (աղ. 30):

Գնահատելով քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի բուժհաստատության ներքին արտաքին և ներքին ռիսկերը, կարելի է փաստել, որ չկան համակարգը կրիտիկական վիճակի բերող ռիսկեր: Մեր կողմից գնահատվել է նաև ռազմավարական և մարտավարական մակարդակների ռիսկերը: Արդյունքում ձևավորվել է ռիսկերի գնահատման քարտեզ, որը հնարավորություն է տվել հիմնավորել ԱԱՊ օղակի ռիսկերի դիրքերը:

Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս հիմնական ռիսկերի վերաբերյալ ունենալ օբյեկտիվ եզրակացություններ: Կարևոր եզրահանգումն այն է, որ առկա բարձր ռիսկերը փաստում են, որ Երևանի քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի բուժհաստատությունում կառավարման համակարգում առկա է հիմնախնդիրներ արդյունավետության և ապահովելու հարցում:

Հաջորդ փուլում գնահատվել են համակարգի կառավարման ռիսկերը (աղ. 31):

**Աղյուսակ 31**

Երևանի քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի բուժհաստատության կառավարման ռիսկերի գնահատումը ստկարևորության

Երեք առավել նշանակալ յուն	«Կարևորություն» (10 բալային համակարգ)	«Կառավարման արդյունավետության յուն» (10բալային գնահատման	«Բացասական էֆեկտի կարևորություն»
------------------------------------	---	---	--



ն Լ Ն Ե Գ Ո Ղ Ռ Ի Ս Կ Ե Ր		հ ամ ակ ար գ )	
<b>1</b>	<b>2</b>	<b>3</b>	<b>4 (2-3)</b>
1 (85,4%)	10	3	+7
2 (74,3%)	9	2	+7
3 (65,4%)	9	1	+8

Աղյուսակ 31-ը լրացվել է ըստ հետևյալ հարցերի պատասխանների .

1. Համաձայն է ԱԱՊ օղակի ռազմավարական մենեջերը, որ այդ ռիսկերը կան կազմակերպությունում (85,4%),
2. Համաձայն է ԱԱՊ օղակի ռազմավարական մենեջերը, որ այդ ռիսկերը կարևոր են (74,3%),
3. Տեղյակ է ԱԱՊ օղակի ռազմավարական մենեջերը, որ այդ ռիսկերն իրատեսական մակարդակում ունեն կարևորություն և նշանակություն (65,4%),
4. Ո՞ւնի կազմակերպությունը ռիսկերի կառավարման միջոցառումների պլան (25,4%),
5. Գտնո՞ւմ եք, որ կազմակերպության կառավարման ինտեգրալ մաս է կազմում ռիսկերի կառավարումը (22,7%):

Առաջարկվել է նշել երեք առավել նշանակություն ունեցող ռիսկերը: Յուրաքանչյուր ռիսկ գնահատվել է ըստ սանդղակի՝ «Կարևորություն», «Կառավարման արդյունավետություն» և այդ երկու ցուցանիշների տարբերությունը՝ «Բացասական է \$ եկտ»: Եթե «Բացասական է \$ եկտը» ստացվի դրական, ապա կարելի է փաստել, որ առկա է ռիսկերի ոչ բավարար կառավարում, իսկ բացասականի դեպքում՝ առկա է ռիսկերի հստակ կառավարում:


Այս քայլից հետո առաջարկվել է ռիսկերի կառավարման համակարգի ձևավորման հետևյալ փուլերը՝

- 1) Ռիսկերի որակական գնահատում, որի արդյունքում որոշվում է առավել

նշանակությունը նույնպես չեն ցուցում ռիսկերը և կազմվում են ռիսկերի պրոֆիլ:

- 2) Ռիսկերի քանակական գնահատում, որի արդյունքում որոշվում է հնարավոր կորուստների հավանականությունը և կատարվում ռիսկերի մակարդակի վրա տարբեր գործոնների ազդեցության վերլուծություն:
- 3) Ռիսկերի նվազեցման հիմնական ուղղությունների ձևավորում, որի արդյունքում հստակեցվում են անհրաժեշտ միջոցառումների պլանավորման և իրականացման հնարավորությունները:
- 4) Ընդհանուր ֆինանսական հնարավորությունների շրջանակներում ծրագրի մշակում:
- 5) Միջոցառումների հսկողություն, որի շրջանակներում հնարավորություն է առաջանում անհրաժեշտության դեպքում կատարվել անհրաժեշտ փոփոխություններ:

Այսպես, ամենամեծ չափաբաժինը կազմել է կազմակերպչական ռիսկը (40%), իսկ բժիշկների մասնագիտական որակավորման հետ կապված ռիսկին բաժին է ընկել 19% (գծ. 17):




**Գծ ապատկեր 17.** Երևանի քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի բուժօգնությունների

կառավարման պոտենցիալ ռիսկերի կառուցվածքը ստորանցված տանգավորումների անաստիճանի (%)

Հետազոտությունների արդյունքների հիման վրա մշակվել է քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի բուժօգնությունների ռիսկ-մեներջմենթի կազմակերպչական-ֆունկցիոնալ մոդել (սխեմա 2): Մոդելը միավորում է բոլոր առաջարկները, որոնք ձևավորվել են ռիսկ-մեներջմենթի և կառավարման համակարգի արդյունավետ կազմակերպման շրջանակներում: Մոդելի իրականացման շրջանակներում մշակվել է ռիսկերի կառավարման նպատակային միջոցառումների ծրագիր:

Այսպիսով, հետազոտությունների արդյունքներից պարզվել է, որ երևանի քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի բուժօգնությունների ռիսկերից կրած կորուստների նվազեցումն այնքան էլ արդյունավետ ձև չէ, քանի որ առկա են ռիսկերի կրիտիկական ցուցանիշներ, որոնք խոսում են առկա համակարգի անկայունության մասին:



**Սխեմա 2. Քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի բոլոր հաստատության ռիսկ-մենեջմենթի կազմակերպչական կառուցվածքային մոդել**

**3.9 Երևանի քաղաքապետարանի ենթակայ ության ԱԱՊ  
օղակի բուժհաստատությունը ներկում  
կազմակերպչական կառուցվածքի քարտեզոխում ներքին  
և քաղաքականավորված ցուցանիշներին համակարգի  
ներդրման հիմնավորումը**

ԱԱՊ օղակում BSC ներդրումը ապահովում է հեռանկարների հավասարաչափ քննարկում: Ըստ Ռոբերտ Կապլանի և Դևիդ Նորտոնի՝ հաջողված BSC համակարգն հաշվի է առնում առնվազն 4 հեռանկար՝ «Ֆինանսներ», «պացիտ», «ներքին բիզնես գործընթաց», «կրթում և զարգացում»:

Այս 4 հեռանկարները պետք է հնարավորություն ստեղծեն հիմնավորել ԱԱՊ օղակում հետևյալ հարցերի պատասխանները, ինչպիսին է «Ֆինանսների», «Պացիտներին», «ներքին բիզնես գործընթացի», «Կրթելու և զարգացման» հեռանկարները:

Առաջին փուլում BSC-ն անհրաժեշտ է մշակել մեկ կառուցվածքային միավորի համար: Այսպես, օրինակ ԱԱՊ օղակի տեղամասային թերապևտիկամ ընտանեկան բժշկի համար:

Երևանի քաղաքապետարանի ենթակայ ության ԱԱՊ օղակի բուժհաստատությունների կառավարման համակարգի քարտեզոխում ներքին հիմնավորման համար մերկողմից կիրառվել է համակարգի բովանդակային վերլուծությունն դեկոմպոզիցիայի մեթոդը (կառուցվածքի տարրերը բաժանել, տարանջատել): Այդպիսի մոտեցման շրջանակներում համակարգի ռազմավարությունը բաժանվել է կոնկրետ ռազմավարական նպատակների ըստ ռազմավարության տարբեր կողմերի: Անհատական նպատակի ինտեգրացիան կառուցվել է այնպես, որ դրանց միջև պատճառահետևանքային կապերն արտահայտեն համակարգի ռազմավարությունը: Սակայն ռազմավարական

նպատակը պետք է կապված լինի ամբողջ համակարգի հենանկարային զարգացման որևէ մասի հետ:

Երևանի քաղաքապետարանի ենթակայ ության ԱԱՊ օղակի բուժհաստատություններում BSC-ի ներդրումը նպատակի չափման կարևոր և ժամանակակից գործիք է, ինչպես նաև ռազմավարական նպատակն իրականացնելու և գնահատման նոր միջոց: BSC-ի կիրառումը նպատակ ունի հստակեցնել համակարգի ռազմավարական պլանի մշակմանը նթացքում նպատակը և այն դարձնել չափելի:

Ցուցանիշները կարելի է նույնականացնել միայն այն ժամանակ, երբ նպատակը հստակ է: Ռազմավարական նպատակի յուրաքանչյուր բաղադրիչի համար առաջարկվում է կիրառել 3-4 ցուցանիշից ոչ ավել: Առանց նպատակային գիտելիքների առկայության ռազմավարական նպատակը չափելու համար մշակված ցուցանիշները չեն կարող իրատեսական լինել: Եթե կառավարչական ցուցանիշներն Վերաբերյալ գիտելիքները բացակայում են, ապա առաջանում է BSC-ի մշակման դժվարություններ: BSC-ի ներդրման նպատակային նշանակությունը դժվարություննը կայանում է նրանում, որ անհրաժեշտ է հիմնավորել այդ ցուցանիշների իրական հասանելի մակարդակը: Պարզվել է, որ ԱԱՊ օղակի BSC-ն անհրաժեշտ է մշակել երկարաժամկետ ռազմավարական պլանավորման համար: Ցուցանիշների և դրանց նպատակային նշանակություն հիմնավորումը ռազմավարական մենեջերների համար դառնում է համակարգում առկա խնդիրների վերաբերյալ լուրջ ազդանշաններ: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս նպատակի քանակական արդյունքները համեմատել պլանավորվածի հետ:

Համակարգի նախագծերի բաշխումն ըստ BSC-ի հնարավորությունն է տալիս հստակեցնել, թե ո՞ր նախագիծն է ռազմավարական նպատակին հասնելու հարցում ունեցել նշանակալից ներդրում:

Ըստ հետազոտության արդյունքների հիմնավորվել է, որ երևանի քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի բուժհաստատություններում ռազմավարական նպատակը ըստ BSC-ի նպատակը չափելի դարձնելու հարցում ունի նշանակություն: ԱԱՊ օղակի յուրաքանչյուր ստորաբաժանման համար կարևոր է մշակել կոնկրետ ցուցանիշներ, որոնք կապ կունենան համակարգի BSC-ի հետ: Կարևորվում է նաև BSC-ի ռազմավարական կատարման հսկողության իրականացումը [101]: ԱԱՊ օղակի BSC-ի համակարգի բարելավման յուրաքանչյուր պատասխանատու պետք է պարբերաբար իրականացնի համակարգի գործունեության վերլուծությունն և գնահատում:

**Ի՞նչ ենք ստանալ ու քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի բուժհաստատություններում BSC ներդրման արդյունքում՝**

1) Համակարգի համար ռազմավարական նշանակություն ունեցող ուղղությունների իրականացմանն ուղղված նյութական և կադրային ներուժի կենտրոնացում: Հստակեցվելու է համակարգի գլխավոր նպատակը, այն իրագործելու միջոցները, ԱԱՊ օղակի ստորաբաժանումների միջև նպատակային ցուցանիշների մուտքագրման անհրաժեշտությունը:

2) ԱԱՊ օղակի յուրաքանչյուր ստորաբաժանման համար ռազմավարական նպատակի հստակեցում:

3) ԱԱՊ օղակի յուրաքանչյուր ստորաբաժանման գործողությունների արդյունքների հստակեցում: Յուրաքանչյուր նպատակի իրականացման համար

կարևոր է ցուցանիշների ճիշտ ընտրությունը: Այդ ցուցանիշների սպասվելիք մակարդակին հասնելը գործընթացի յուրաքանչյուր մասնակցին հնարավորություն է տալու հասկանալ իր դերը համակարգի ռազմավարության իրականացման ամբողջ գործընթացում:

4) «Վերևից ներքև» ռազմավարության իրականացման գործընթացի կառավարելիությունը: Այդ դեպքում համակարգն իր մենեջերի ձեռքում դառնալու է նպատակին հասնելու արդյունավետ գործիք:

Երևանի քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի բուժհաստատությունների կազմակերպչական կառուցվածքն իրենից ներկայացնում է գծային ֆունկցիոնալ մոդել: Այսպիսի մոդելը նախատեսում է համակարգի ուղղահայաց կազմակերպչական վերահսկողությունը: Կախված կատարվող գործողությունների տեսակից և մասնագիտական որակավորումից՝ աշխատակիցները խմբավորված են բաժիններում: Աշխատակիցների խմբավորումն ըստ համապատասխան խնդրի կատարման և միատարրության հնարավորություն է տալու ապահովել ծավալային էֆեկտ, որն էլ իր հերթին կբերի առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործման:

Ըստ հնարավորության արդյունքների կարևորվում է մասնագիտացված աշխատանքային խնդիրների առավելագույն խոշորացումը, որը հնարավորություն կտա թիմի մեջ միավորել աշխատակիցներին ըստ իրենց հնարավորությունների:

Կառավարման սկզբունքներին համապատասխան առաջարկվում է ղեկավարի և ենթակայության աշխատողների հարաբերակցության նոր մոտեցումներ: Անհրաժեշտ է ձգտել



հարաբերություններին այնպիսի օպտիմալացման, երբ դեկավարի աշխատանքային ծանրաբեռնվածություն փոքր աճը կարող է ապահովել ԱԱՊ օղակի աշխատանքի արդյունավետության բարձրացում: Գործնականում այսպիսի սկզբունքի իրականացումը դժվար է, քանի որ բացակայում են կառավարման նոր մոտեցումների գիտական հիմնավորվումը:

Երևանի քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի բուժհաստատություններում գծային-Ֆունկցիոնալ կառուցվածքն ապահովում է կառավարչական աշխատանքի այնպիսի բաշխում, որի դեպքում կառավարման գծային օղակը կոչված է կառավարելու, իսկ ֆունկցիոնալը՝ իրականացնելու ծառայություններ:

Քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի բուժհաստատություններում առաջարկվող կառավարման մոդելում ընդհանուր պրակտիկայի բժիշկն իր գործառնությունները իրականացնում է որպես նազամավարական բիզնես-միավոր: Այս օղակը տնօրինում է բոլոր կրեդիտները և կոորդինացնում աշխատանքները:

**Երևանի քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի կառավարման համակարգի բարեփոխման մոդել**

ԱԱՊ օղակի գործունեության վերլուծությունը հնարավորություն է տվել հիմնավորել, որ ԲՕՈ-ի ապահովման համակարգում առավել կարևոր է կառուցվածքային արդյունավետության ճիշտ կառավարումը, ինչպես նաև ծառայությունների մատուցման հմտությունների, ծավալի և տեսակի ընդլայնման հնարավորությունների ներդրումը:

Ներկա պայմաններում քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի բուժհաստատություններում վճարովի ծառայությունների ծավալի ավելացումը և ՊՆԾ-ի

կատարողականն ունի հակասական հարաբերակցություն: Այսպես, օրինակ՝ պետական կառույցների կողմից բարձր և ցածր աստիճանի հսկողություն, ծառայությունների որակի մակարդակի թույլ և բարձր մրցակցություն:

ԱԱՊ օղակի բուժհաստատությունների ռազմավարական հնարավորությունների բազմակողմանի վերլուծությունը թույլ է տալիս գալ այն եզրահանգման, որ առաջնային օղակն ունի թույլ հնարավորություններ իրականացնելու իր առջև դրված ռազմավարական նպատակը, եթե համակարգում չեն երդրվի ևրացուցիչ ռեսուրսներ և չիրականացվի կազմակերպչական տեխնոլոգիական վերականգնումներ:

Ընդհանրացնելով երևանի քաղաքապետարանի ենթակայություն ԱԱՊ օղակի բուժհաստատություններ կառավարման բնութագրիչները, այն հիմք է հանդիսացել մեր կողմից իրականացնել կազմակերպչական ներքին միջավայրի վերլուծություն և ձևավորել կազմակերպչական հիմնախնդիրների դաշտը (աղ. 32):

Կոշտ պետական սահմանափակ ֆինանսավորման պայմաններում և ֆիքսված բուժօգնություն ծավալների շրջանակներում բյուջետային կազմակերպչական կայունություն հնարավոր է ապահովել միայն ծախսերի օպտիմալացման և ֆինանսավորման այլ աղբյուրների ընդգրկման ճանապարհով:

**Աղյուսակ 32**

Երևանի քաղաքապետարանի ենթակայություն ԱԱՊ օղակի բուժհաստատությունների կառավարման հիմնական էլեմենտների բնութագրիչները

Բազմավարություն	ԱԱՊ օղակում ներդրված ՊԼԾ շրջանակներում մատուցվող ծառայությունների ռազմավարական տարբերակում ըստ ծառայության որակի և սպասարկման մատչելիության,
-----------------	--

	կազմակերպության բարենպաստ վարկանիշի ձևավորում, որը նպատակ ունի մրցակիցների շրջանում ստանալ գերակայություններ, շուկայի ընդլայնում, բուժօգնություն որակի և մատչելիության մակարդակի բարձրացում, վճարունակ պացիենտների հոսքի ավելացում:
Կառուցվածք	ԱԱՊ օղակում գծային ֆունկցիոնալ կառուցվածքի փոխարինում ծրագրային-նպատակային կառուցվածքի
Կառավարման համակարգ	ԱԱՊ օղակի բժշկական ծառայությունների կառավարման այնպիսի համակարգի ներդրում, որը կապահովի ծառայությունների որակի, հզորությունների, նախագծերի, ծախսերի, մարքեթինգի, նորարարությունների ներդրում:
Կառավարման գործիքակազմ	Քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի մատուցած ծառայությունների պլանավորում, կանխատեսում, որակի հսկողությունը բազմաստիճան համակարգի, ֆինանսական հոսքերի հսկողություն համակարգի ներդրում:
Կառավարման ոճ	Նպատակահարմար է ԱԱՊ օղակում կառավարման դեմոկրատական ոճի ներդրում:
Անձնակազմի մասնագիտական որակավորում	Թիմում աշխատելու ունակություն, կրթվածությունը բարձր աստիճան, ինովացիաների նկատմամբ հակադրման ցածր մակարդակ, կորպորատիվ մշակույթի ձևավորում:
Համատեղ բաժանելի արժեքներ	Կազմակերպության իմիջն այսօր թույլ է տալիս ցուցաբերել ցածր որակի բուժօգնություն:

Երևանի քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի բուժհաստատություններում բուժօգնության կառավարման ռազմավարության շրջանակներում ընտրվել է որակյալ ռազմավարական վերլուծության մատրիցա՝ SWOT մատրիցա: Այն հնարավորություն է տալիս ներկայացնել կառավարչական որոշման ընդունման հնարավորությունը՝ հիմնվելով ԱԱՊ օղակի բուժհաստատությունների կառուցվածքային տեղեկատվական դաշտի վերլուծության վրա:

Գնահատվել է քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի բուժօգնությունների ուժեղ և թուլ կողմերը: Որպես ուժեղ կողմ կարելի է նշել ԱԱՊ օղակի հաստիքներով ապահովվածությունը, իսկ թուլ կողմը՝ բարձր որակավորում ունեցող մասնագետների բացակայություն, զարգացման և հնարավորությունների սահմանափակում, ընթացիկ գործունեության կոշտ ժամանակացույց, համակարգի թերֆինանսավորման վտանգ, բուժախտորոշիչ սարքավորումներով ոչ բավարար հագեցվածություն, ֆինանսական պատասխանատվության աստիճան, իրավական և հսկողական կարգավորման աճող ուժեղացում:

Այս ամենը սահմանափակում է ԱԱՊ բուժօգնությունների ռազմավարական հեռանկարների և այն իրականացնելու հնարավորությունների շրջանակները:

Բացի այդ, հավաքագրված պացիենտների մի մասը, որը ստանում է վճարովի ծառայություններ, կարելի է համարել պոլիկլինիկայի համար ուժեղ կողմ, իսկ պացիենտի համար՝ թուլ կողմ:

**Աղյուակ 33**

Երևանի քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի բուժօգնությունների BSC-ի բաղադրիչների բնութագիրը


	«Ֆինանսական միջոցներ»	«Պացիենտներ»	«Գործընթաց»	«Հնարավորություններ»
1	ծախսերի օպտիմալացում, կրճատելով ԱԱՊ օղակի ոչ արտադրական ծախսերը	սպասարկման որակի բարելավում	որակի և սպասարկման հսկողության կատարելագործում	նոր ծառայությունների ներդրում
2	շուկայի ընդլայնման օգնությամբ եկամուտների ավելացում	մատուցվող ծառայության որակից պացիենտների բավարարվածություն բարձրացում	մատուցվող ծառայությունների ստանդարտացման սկզբունքների ներդրում	ինովացիոն տեխնոլոգիաների ներդրում
3	ծառայությունների	պացիենտներ	համակարգի հնարավորություններ	աշխատակիցներ

	կառուցվածքի օպտիմալացման ճանապարհով եկամտաբերության ավելացում	հարաբերության յուրօրինակ կառավարման համակարգի կառուցում	յուրևների ընդլայնում	որակավորման մակարդակի բարձրացում
4	կրեդիտավորման հնարավորության յուրևների ընդլայնում	բուժհաստատության ճանաչելիության ստիճանի բարձրացում	նեսուրսների բաշխման և ենթակառուցվածքների համակարգի օպտիմալացում	գովազդային հնարավորության յուրևների ակտիվացում

ՊԼՃ շրջանակներում ծառայությունների ստացող պացիենտների քանակի ավելացումը ԱԱՊ օղակի համար կարելի է համարել «թույլ կողմ», հատկապես բյուջետային ֆինանսավորման արտահայտված դեֆիցիտի պայմաններում:

Հսկողության տարբեր ուղղությունների միավորումը, այսինքն ներքին ֆինանսական գնահատականի և ռազմավարական հաշվետվության գործիքները հնարավոր է ցուցանիշների բալանսավորման համակարգի ներդրման պայմաններում (Balanced Score Card, BSC) (աղ. 33):

Մեր կողմից մշակվել են հիմնական սկզբունքներ և դրույթներ, որոնք կարող են ապահովել ԱԱՊ օղակի բուժհաստատությունում մատուցվող ծառայությունների որակը, մասնավորապես՝ ուղղվածություն դեպի արդյունք, մշտադիտարկման կիրառում, որակի ներքին աուդիտ, որակի բարելավման ռազմավարական պլանավորում (սխեմա 3):



**Սխեմա 3.** Երևանի քաղաքապետարանի ենթակայ ության ԱԱՊ  
 օղակի բուժհաստատությունների ռազմավարական  
 կառավարման մոտեցումներ

ԲՕՈ-ի գնահատման ինդիկատորների ընտրության հարցում մենք առավել ություն ենք տրվել բուժախտորոշիչ գործընթացի կրիտիկական կետերին (սխեմա 4):

Երևանի քաղաքապետարանի ենթակայ ության ԱԱՊ օղակի բուժհաստատությունների գործունեության վերլուծության համար մեր կողմից կիրառվել է գնահատման ինտեգրալ մեթոդ: Առաջին փուլում բուժորոշող ցանցի շնորհիվ են համեմատելի: Այդ ցանցի շնորհիվ են որպես էքստենսիվ (%) և ինտենսիվ (‰) ցանցի շնորհիվ Ցուցանիշների ինտեգրալ գնահատումը կատարվել է 3փուլով.

I փուլում ցանցի շնորհիվ արժեքները բազմապատկվել են իրենց համապատասխան կշռային գործակցներով,

II փուլում գործակցները գումարվել են, յուրաքանչյուր բաժնի ցանցի շնորհիվ համար հաշվարկվել է դրանց միջին արժեքը,

III փուլում հաշվարկվել է ինտեգրալ ցանցի շնորհիվ (աղ. 34):


**Աղյուսակ 34**

Երևանի քաղաքապետարանի ենթակայ ության ԱԱՊ  
 օղակի բուժհաստատությունների  
 գործունեության ինտեգրալ գնահատում

Ժամանակահատված	2013թ .	2014թ .	2015թ .	2016թ .
Ինտեգրալ	39,4	38,9	37,4	35,2

գնահատական (%)				
Տարբերություն (%)	-	38,9-39,4= -0,5	37,4-38,9= -1,5	35,2-37,4= -2,2

Պարզվում է, որ ԱԱՊ օղակի գործունեության ինտեգրալ գնահատման ցուցանիշը ենթարկվել է նշանակալից փոփոխության ( $\chi^2=40.7$ ,  $P<0.05$ ): Այսպես, արդյունավետության տեսանկյունից ցածր ինտեգրալ ցուցանիշ է հաշվարկվել 2016թ-ին (35,2%), որը պայմանավորված է եղել «Պացիենտներ», «Ներքին գործընթացներ» և «Ֆինանսներ» հեռանկարային ցուցանիշների նշանակություն ցածր մակարդակով: ԱԱՊ օղակի բուժհաստատությունների համար միջին ինտեգրալ ցուցանիշը կազմել է 38,9%: Ըստ այդ ցուցանիշի գնահատման արդյունքի պարզվում է, որ առողջապահական համակարգի այս ստորաբաժանումը օգտագործում է իր հնարավորությունների ընդամենը 38,9%-ը: ԱԱՊ օղակի բուժհաստատությունների կառավարման արդյունավետությունը բարձրացնելու համար կարևորվում է նաև առկա հիմնախնդիրների հայտնաբերումը:





Կառավարչական ճիշտ որոշում կայացնելու համար մեր կողմից վերլուծության և գնահատման է ենթարկվել յուրաքանչյուր «հեռանկարներ» բաժինը (աղ. 35):

**Աղյուսակ 35**

Երևանի քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի բուժհաստատության ներհանրապետական ինտեգրալ գնահատումն ըստ «հեռանկարներ» բաժինների (2013-2015թթ, %)

«Հեռանկարներ» բաժինները	2013թ .	2014թ .	2015թ .	2016թ .
«Պացիենտներ»	15,7	15,6	14,8	14,3
«Ֆինանսներ»	5	5	4	2
«Կրթում և զարգացում»	10,0	15,0	13,4	10,0
«Ներքին գործընթացներ»	8,7	3,3	5,2	8,9
Ինտեգրալ գնահատական	39,4	38,9	37,4	35,2

Այսպիսով, հետազոտության արդյունքները հիմնավորում են, որ Երևանի քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի բուժհաստատության գործունեության արդյունքային գնահատման հարցում մեծ է «Պացիենտներ» հեռանկարի տեսակարար կշիռը: Դա է պատճառը, որ մեր կողմից նպատակի ծառի կառուցման ժամանակ այս հեռանկարի կշռային գործակցիև տրվել է ամենամեծ արժեքը:

«Ֆինանսներ» և «Ներքին գործընթացներ» հեռանկարներն ունեցել են ցածր նշանակություն: Այն պայմանավորված է ֆինանսական ցուցանիշների (ԱԱՊ օղակի ավագ և միջին բուժանձնակազմի միջին աշխատավարձ, վճարովի ծառայությունների տեսակարար կշիռ, per capita ֆինանսավորման չափ) ցածր մակարդակներով:

Կարևորվում է նաև «Ներքին գործընթացներ» հեռանկարի ցուցանիշների ցածր մակարդակի

ազդեցությունը համակարգի կառավարման վրա (ԱԱՊ  
օղակի կառավարման տնտեսապես արդյունավետ  
մեթոդների ներդրում, կանխարգելիչ գնումների  
որակի, ԲՕՈ-ի կառավարման համակարգի բարելավում,  
հիմնական ֆունկցիոնալ օգտագործման, ՊՆԾ-ի  
կատարողականի արդյունավետության բարձրացում):

Այսպիսով, մեր կողմից ընտրված  
մեթոդաբանությունը հիմք է հանդիսացել առա-  
ջարկել՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության  
ԱԱՊ օղակի բուժհաստատության ներքին կառավարման  
նպատակի ապահովման համար համակարգում ներդնել  
BSC:


Որպեսզի BSC-ի ներդրումը լինի արդյունավետ  
կարևորվում է հստակ ձևակերպել ԱԱՊ օղակի  
բուժհաստատության գարգացման  
նազմավարությունը: Ելնելով ՀՀ ԱՆ ԱԱՊ օղակի  
գարգացման նազմավարական ծրագրից, մենք  
հստակեցրել ենք BSC-ի կառուցման հիմնական նպատակը:  
Պարզվել է, որ ԱԱՊ օղակի բուժհաստատության ներքին  
գործունեության գնահատման ինտեգրալ մեթոդի  
ներդրումը հնարավորություն կտա գնահատել այդ  
օղակի սոցիալական արդյունքը՝ նվազեցնել  
հավաքագրված բնակչության հիվանդացության և  
բարձրացնել հիվանդությունների վաղ  
հայտնաբերման ցուցանիշների  
հնարավորությունների մակարդակը:

Ռազմավարական նպատակին հասնելու համար  
որպես հիմնական մեթոդ մեր կողմից ընտրվել է ԱԱՊ  
օղակի բուժհաստատության նպատակի  
կառուցվածքային վերլուծության մեթոդը:

Հստակեցվել է ԱԱՊ օղակի գլխավոր նպատակը (ի  
մակարդակի նպատակ)՝ բարձրացնել ԲՕՈ և

մատչելի ու թյուր, որն ուղղված է բնակչության առողջության բարելավմանը և կյանքի միջին տևողության ավելացմանը: Հիմնական նպատակի հաջորդ դեկոմպոզիցիան (II մակարդակի նպատակ) կատարվել է «Նպատակի ծառ» կառուցելու օգնությամբ: Գնահատվել է ԱԱՊ օղակի բուժօգնությունների գործունեությունը, որը հնարավորություն է տվել հիմնական նպատակը համաձայնացնել ՊՆԾ-ի կատարողականի հետ: Այսպիսի մոտեցման արդյունքում ձևավորվել է հիմնական ռեսուրսների օգտագործման և բաշխման արդյունավետության բարձրացման, կազմակերպության եկամուտների ավելացման բազային նպատակը:

BSC-ը հնարավորություն է տվել հստակեցնել նպատակի 4 հիմնական հեռանկարների հետևյալ ուղիները՝ «Պացիենտներ», «Ֆինանսներ», «Կրթում և զարգացում» «Ներքին գործընթացներ»: Այս խնդրի լուծման համար ընդգրկել ենք ԱԱՊ օղակի բուժօգնությունների փորձագետներ (սխեմա 5):



**Սխեմա 5. Երևան քաղաքի քաղաքապետարանի  
 ենթակայ ության ԱԱՊ օղակի  
 բուժօգնությունը ըստ ներքին «նպատակի ծառի»  
 կառուցման մակարդակները**

Փորձագիտական խմբում ընդգրկվել են 7 փորձագետ, որոնք ընտրվել են մեր կողմից առաջադրված չափանիշների հիման վրա: Փորձագետների առջև դրվել են հետևյալ խնդիրները՝

1) ԱԱՊ օղակի բուժօգնությունը հեռանկարային զարգացման բաժինների դասակարգումը ստիբենց նշանակության, որից հետոյ ուրաքանչյուրիս ըստիբենց նշանակության տրվել է կարգային գործակից: Գործակիցների գումարը պետք է կազմի 1միավոր կամ 100%:

2) ԱԱՊ օղակի բուժօգնությունը զարգացմանյ ուրաքանչյուր «հեռանկարի» ներառում, նպատակի ընտրություն (յ ուրաքանչյուր բաժնի համար 7), որը հնարավորություն կտա հասնել ԱԱՊ օղակի բուժօգնությունը նազմավարական նպատակին:


Փորձագետները գնահատել ենյ ուրաքանչյուր հեռանկարի կարևորությունը և տվել են դրանց «կշռի» գործակցի արժեք (աղ. 36):

**Աղյուսակ 36**

Երևանի քաղաքապետարանի ենթակայ ության ԱԱՊ օղակի բուժօգնությունը կառավարման «Հեռանկարների» կարգային նշանակության «կշռի» գործակցի հաշվարկ

	«Հեռանկարներ»	Յ ուրաքանչյուր հեռանկարի կարգային համարը	Կշռի գործակցի արժեքը
1.	«Պացիենտներ»	2	0,3 (30%)
2.	«Ֆինանսներ»	1	0,5 (50%)
3.	«Կրթում և զարգացում»	3	0,1 (10%)

4.	«Ներքին գործընթացներ»	3	0,1 (10%)
	Ընդամենը	-	1,0 (100%)



հիմնական բաղադրիչների գրաֆիկական դիրքերը

Յաջորդ քայլով BSC-ի մեջ մտնող ցուցանիշներին տրվել է կարգային համար, որի հիման վրա կառուցվել է ԱԱՊօղակի բոլոր հաստատությունների զարգացման ռազմավարական քարտեզ: Ըստ քարտեզի տվյալների հիմնավորվել է, որ ԱԱՊօղակը բոլոր հաստատությունը ապահովված չեն որակավորված մասնագետներով, առաջնային օղակում աշխատելը ցածր սոցիալական գրավչություն ունի, ինչպես նաև ոչ ֆինանսական բաժնի բաղադրիչների փոխկապակցվածությունը և փոխազդեցությունը ապահովում է «Ֆինանսներ» հեռանկարի զարգացում (սխեմա 6):

Արդյունքում փորձագետները «Պացիենտներ» հեռանկարը համարել են ԱԱՊօղակի բոլոր հաստատությունների համար ամենակարևոր

նպատակը, իսկ մնացածը՝ գնահատվել են որպես գործոններ հիմնական նպատակին հասնելու համար:

Փորձագետները կարծիքները ամփոփվել են հաճախականությունների աղյուսակի օգնությամբ (աղ. 37):

**Այ ու ս ա կ 37**

Երևանի քաղաքապետարանի ենթակայության ԱԱՊ օղակի բուժհաստատությունների նպատակի հեռանկարների փորձագիտական գնահատման արդյունքները

<b>«Հեռանկարներ»</b>				
<b>«Պացիենտներ»</b>			<b>n</b>	<b>%</b>
1.	Պոլիկլինիկական օղակից պացիենտների բավարարվածություն տեսակարար կշիռ	10	27,8	
2.	Կցագրված բնակչության առողջության պահպանումն ամրապնդում	8	22,2	
3.	Քրոնիկ հիվանդների բուժման որակի բարելավում	5	13,4	
4.	Ցուցաբերվող բժշկական ծառայությունների ընդլայնում	4	11,1	
5.	Կցագրված բնակչության մահացության նվազում	1	2,8	
6.	Աշխատունակ տարիքի բնակչության մահացության նվազում	2	5,6	
7.	Կանխարգելիչ ծառայությունների ընդլայնման ճանապարհով ընդհանուր հիվանդացության մակարդակի իջեցում	1	2,8	
8.	Ուշացած չորորակ նորագոյացությունների դեպքերի նվազեցում	5	13,9	
Ընդամենը (%)			36	100
<b>«Ֆինանսներ»</b>				
1.	Կազմակերպության արտաբյուջե տային միջոցների ծավալների ավելացում	10	27,8	
2.	Կրեդիտորական պարտքերի իջեցում	9	25,0	
3.	Բժշկական ծառայությունների շուկայում կազմակերպության մրցունակության բարձրացում	5	13,9	
4.	Ծախսերի օպտիմալացում ստացիոնարին փոխարինող օգնության ծավալների ավելացման հաշվին	6	16,7	
5.	Ծառայությունների կառուցվածքի օպտիմալացման ճանապարհով եկամուտների ավելացում	3	8,3	
6.	Ծառայությունների քանակի ավելացում	3	8,3	
Ընդամենը			36	100
<b>«Կրթում և զարգացում»</b>				
1.	Բարձրորակ մասնագետների ընդգրկում	9	25,0	
2.	Անձնակազմի կրթման և զարգացման համար ներդրումների արդյունավետության բարձրացում	7	19,4	
3.	Բուժանձնակազմի առեստացիայի մակարդակի բարձրացում	5	13,9	
4.	Հաստիքներով ապահովվածության բարձրացում	4	11,1	

Աղյուսակ 37-ի շարունակությունը

5.	Կադրերի հոսունությունը և վազեցում	8	22,2
6.	Բուժհաստատություն անձնակազմի բավարարվածությունը և բարձրացում	3	8,3
	Ընդամենը	36	100
<b>«Ներքին գործընթացներ»</b>			
1.	Բնակչության համար բուժօգնություն և մատչելիությունը բարձրացում	7	19,4
